1899

ՈՐԲԸ

(Հայ ժողովրդական ավանդություն)

Սրհա՛կ... Սրհա՛կ... գիշերն ի բուն
Կանչում է Որբն աղեկըտուր,
Աշխարհքն այնինչ մըտած խոր քուն,
Ինքը մենակ ու շուրջը լուռ։

5 Աղջիկ էր նա մի ժամանակ,
Էնպես աշխո՛ւյժ ու գեղանի.
Թուրքը տեսավ, խելքը գընաց,
Ուզեց զոռով հարեմ տանի։

— Մի՛ վախենար, սիրուն քուրի՛կ,
10 Ես չեմ թողնի քեզ տանելու.
Քեզ կըթռցնեմ, ինչպես մըրրիկ,
Էս աշխարհքից հեռո՛ւ, հեռո՛ւ...

Էսպես ասավ քաջ Սրհակը,
Քըրոջն առավ փախա՛վ, գընաց,
15 Թողած իրենց հոր աշխարհքը,
Թուրքի դաժան լուծը թողած։

— Տե՛ս, էն ձյունոտ, բարձրը սարեր,
Որ ձըգվում են հեռվում ահա.
էն սարերն էլ անցնենք թե չէ՝
Դենը, քուրի՛կ, էլ թուրք չըկա...

Հենց էս խոսքում՝ թուրքը հասավ,
Սև ձին քըշած՝ սարի տակից.
— Իմն է աղջիկն, իմն է, ասավ,
Ո՞ւր եք փախչում դուք իմ ճանկից...

— Մի՛ վախենար, սիրուն քուրի՛կ,
Կանգնած եմ ես չար թուրքի դեմ.
Փախի՛ր, գընա՛... ինչպես մըրրիկ՝
Ես էլ կըգամ քեզ կըհասնեմ...

Ու ետ դարձավ քաջ պատանին,
Ձենքի շաչյուն, զարկ ու աղմուկ.
Զարկ են տալիս, զարկ են առնում
Հայի անահ կըտրիճն ու թուրք...

Աղջիկն արագ վազ է տալի,
Շունչը հատած փախչո՛ւմ, փախչո՛ւմ.
Մին էլ նայեց՝ թուրքն է գալի,
Փընչում է ձին, զենքը շաչում...

— Ա՛խ, ի՛նչ կըլնի թռչուն դառնամ...
Կանչեց ահից խեղճը հանկարծ,
Ու, բաց էին դըռներն երկնից,
Լըսեց նըրա ձենը Աստված։

Դարձավ թըռչուն մի թևավոր,
Երկինքն ելավ, թըռա՜վ, պըրծա՜վ.
Մընա՜ց, մընա՜ց, մինչև էսօր
Քաջ ախպերը ետ չըդարձավ։

էն օրվանից թըռչուն քույրը
Ցերեկն ահով կուչ է գալի,
Հենց հասնում է մութ գիշերը՝
— Սրհա՜կ... Սրհա՜կ... ձեն է տալի։

Ձեն է տալի գիշերն ի բուն
Կանչում տըխո՜ւր, աղեկըտո՜ւր,
Աշխարհքն այնինչ մըտած խոր քուն,
Ինքը մենակ ու շուրջը լուռ։